

ԳՐԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ ՐԵԸԵՆԶԻՅԻ

Ր. Գ. ՏԱԱԿՅԱՆ. *Франко-турецкие отношения и Киликия в 1918—1923 гг.* Издательство АН АрмССР, Ереван, 1986, 283 с.

Ժամանակագրական առումով Ռ. Գ. Սահակյանի աշխատությունն ընդգրկում է ընդամենը «վեց տարի» 1918—1923 թթ. միջև ընկած շրջանը։ Ստվալն դրանք քաղաքական բուռն իրադարձություններով հագեցված, միջազգային հարաբերությունների կտրուկ, հաճախ նաև անսպասելի շրջադարձերով, իմպերիալիստական դավադրությունների ու գործարքների առատությամբ լի տարիներ էին։ Դրանք միաժամանակ Մեծ եղեռնին անմիջականորեն հաջորդած շրջանում արևմտահայության բեկորների հույսերի ու հուսախաբությունների ողորդական բազմադանուրի միմյանց աչքի ընկնող տարիներ էին։

XIX դարի վերջին և XX դարի սկզբին կիլիկիահայությունը մեկ սերնդի ընթացքում երկու անգամ (1894—1896 և 1909 թթ.) եղավ թուրքական դաժանության զոհ, ենթարկվելով անթույլատրելի 1915—1916 թթ. արևմտահայության ցեղասպանության օրերին մահաշունչ հոգմը սավառնեց նաև կիլիկիայում և տեղի հայության մոտ կեսը ենթարկվեց զանգվածային բնաջնջման ու տեղահանության դեպի Արաբիայի անսպասելի Սահյան նույնիսկ դրանից հետո իթթիհատական դահիճների շահողվեց այնպես, որ ստեղծվեց կայուն թուրքական մեծամասնություն։ Առավել ևս, որ աշխարհամարտի ավարտից հետո շարդերից վերապրած հայությունը վերստին սկսեց վերադառնալ հարազատ վայրը։

Այսպիսով թուրք տիրապետող շրջանների վրա մղծավանջի նման տիրապետում էր այն մտավախությունը, որ ազատարաղծ Զեյթունի ոգին նոր վերածնունդ կապրի և կիլիկիայի հայ բնակչությունը պայքար կծավալի հանուն ազգային օջախի ստեղծման կամ ինքնավարության։ Դա թվում էր շատ հավանական մանավանդ այն պատճառով, որ Անտանտի տերությունները, մասնավորապես Ֆրանսիան, առաջնորդվելով բացառապես իրենց քաղաքական շահախնդրություններով, չէին խորշում ռալակական խաղաքարտն օգտագործել իրենց իմպերիալիստական նպատակների օգտին, կիլիկիահայությանը շուրջվելով անորոշ ու մանվածապատ խոստումներ և հուսադրե-

լով նրանց զանազան սին երաշխիքներով։

1919 թ. հունիս-օգոստոս ամիսներին էրդրումում գումարված «Արևելյան վիլայիթների իրավունքների պաշտպանության կոնգրեսը» և նրանում ընդունված այսպես կոչված «Ազգային ուխտը» ալլևս ոչ մի կասկած չէին թողնում, որ ազգային հարցում նորաթուխ թուրք ազգայնականները՝ քեմալականները, Օսմանյան կայսրության ճնշված ժողովուրդների ճակատագրի լուծման հարցում գնում են իրենց նախորդների ուղիով։ Գրքում հատկապես փաստացի տվյալներով ցույց է տրվում, որ նրանք առանձնահատուկ անաշտ դիրք էին գրավել հայ ժողովրդի ինքնորոշման հարցում, վճուականորեն պայքարելով թուրքական պետության մեջ նրա համախմբման և ազգային օջախ ստեղծելու նվիրական ձգտումների դեմ։

Գրքում ցույց է տրվում, որ պատերազմի ավարտից հետո Անգլիայի և Ֆրանսիայի միջև բորբոքվել էր սուր պայքար Մերձավոր Արևելքում առաջատար դիրքեր ձեռք բերելու համար։ Այդ պայքարի տրամաբանությունը այնպիսին էր, որ Ֆրանսիային մղելու էր դեպի քեմալականների հետ համագործակցության դիրքերը։ Մեկնաբանելով դրա դրդապատճառները, Ռ. Գ. Սահակյանը կատարում է Ֆրանսիայի մերձավորարևելյան քաղաքականության մանրազնին վերլուծություն, քալլ առ քալլ բացահայտելով այդ պետության թուրքամետ քաղաքականության ակունքները և նրա ներքին մղումները։ Հատկապես արվում է կարևոր դիտում այն մասին, որ չորս հարյուրամյակի ընթացքում, ընդհուպ մինչև առաջին համաշխարհային պատերազմը, առանձին աննշան բացառություններով, թուրք-ֆրանսիական հարաբերությունները զարգացել են հանգիստ հունով, առանց խորը քաղաքական ճգնաժամերի ու ցնցումների։ Նույնիսկ համաշխարհային պատերազմը ի վիճակի չեղավ խաթարելու ֆրանս-թուրքական համերաշխության խորն ու կայուն հիմքերը։ Ֆրանսիայի թուրքասիրությունն ուներ բազմաթիվ ծանրակշիռ կովաններ, առավելապես խարսխված լինելով ֆինանսատնտեսա-

կան ու քաղաքական գործողների վրա: Բացի այդ, մեծ էր Թուրքիայի դերը մարմնական աշխարհում: Նա հանդիսանում էր խալիֆաթի կենտրոն: Իսկ Ֆրանսիայի գաղութներում բնակվում էր ավելի քան 23 միլիոն մասնական բնակչություն: Փարիզում իշխում էր այն մտայնությունը, որ Թուրքիայի նկատմամբ թշնամական քաղաքականությունը անմիջապես առաջ կրերի Ֆրանսիայի ընդարձակ գաղութային տիրույթների բնակչության դժգոհությունն ու բացասական ռեակցիան: Այսպիսով մերկացվում է Թուրքիայի քրիստոնյա ժողովուրդների և առաջին հերթին հայ ժողովրդի նկատմամբ Ֆրանսիայի ազատագրական առաքելությանն առաջին կեղծիքը: Վերևում հիշատակված բազմաթիվ շահերի ողջ կծիկը ֆրանսիական կառավարությանը մղում էր դեպի անշատ մերձավորարևելյան քաղաքականություն, թեև դա իր մեջ պարունակում էր Անտանտի գծով իր դաշնակցի՝ Անգլիայի հետ հարաբերությունները սրելու անխուսափելի պտանգ:

Գրքում հեղինակը հանգամանորեն կանգ է առնում այն երևույթի վրա, թե ինչպիսի տեղ էր զբաղում Կիլիկիան Ֆրանսիայի մերձավորարևելյան տնտեսական ու քաղաքական շահերում: Այդ երկրամասը անհրաժեշտ էր Ֆրանսիային ինչպես տնտեսական, այնպես էլ ռազմաստրատեգիական առումով, մասնավորապես հյուսիսից իր միակ ենթամանդատային տերիտորիայի՝ Սիրիայի անվտանգությունն ապահովելու համար: Ընդ որում Ֆրանսիան ստիպված էր Կիլիկիայի նկատմամբ իր պարտավորությունները պաշտպանել ոչ միայն քեմալականների ոտնձգություններից, այլև ամերիկյան իմպերիալիզմի հավակնություններից: Այս կապակցությամբ գրքում բերվում են ուշագրավ տեղեկություններ այն մասին, որ ԱՄՆ-ի իմպերիալիստական շրջանների կողմից ստեղծված Քինգ-Կրեյնի հանձնաժողովը 1919 թ. հունիս-հուլիսին Փարիզի խաղաղության կոնֆերանսին էր ներկայացրել մի հաշվետվություն, որտեղ առաջարկվում էր ի թիվս Կ. Պոլսի, Փոքր Ասիայի և Սիրիայի Միացյալ Նահանգներին հանձնել նաև Կիլիկիայի նկատմամբ մանդատը:

Ֆրանսիական դիվանագիտական փաստաթղթերի մանրազնին ուսումնասիրությունը զբախում էր աշխատության հեղինակին բերել է այն համոզման, որ պատերազմի ավարտից հետո ֆրանս-թուրքական դիվանագիտական առաջին շփումները սկսվել են 1919 թ. հոկտեմբերին, ընդ որում դրա նախաձեռնությունը պատկանում էր Ֆրանսիային: Ծույց է տրվում նաև, որ քեմալականները ևս մեծազույն շահագրգռվածություն էին դրսևորում Ֆրանսիայի հետ անշատ պայմանավորվածության հասնելու հարցում, որի մեջ

ներառեց տեսնում էին ոչ միայն միջազգային մեկուսացումից դուրս գալու հնարավորություն, այլև մի միջոց՝ մերձավոր Արևելքում անգլո-ֆրանսիական հակասությունները սրելու և դրանից առավելագույն օգուտներ քաղելու համար:

1919 թ. դեկտեմբերի 6-ին Սվասում քեմալականների հետ հանդիպման և ռանկեղծ զրույցներից ընթացքում Սիրիայում և Կիլիկիայում ֆրանսիական զերազույն կոմսար ժորժ Պիկոն հայտարարում է, որ Միջին Արևելքի (Ֆրանսիայի պրեմիեր-մինիստր—Վ. Բ.), այնպես էլ ֆրանսիական ազգի քաղաքականությունը կայանում է նրանում, որ Միջին Արևելքի այն մասում, որտեղ գոյություն ունի թուրքական մեծամասնություն, ստեղծվի ուժեղ և անկախ թուրքական պետություն: Հավաստիացնելով, որ Ֆրանսիան կձեռնարկի բոլոր հնարավոր միջոցները այդ նպատակին հասնելու համար, Պիկոն անսրբող կերպով հասկացնում էր, որ Ֆրանսիան պատրաստ է զոհասեղանին դնել Կիլիկիայի քրիստոնյա բնակչության և առաջին հերթին հայերի ճակատագիրը:

Ֆրանսիական դիվանագետի այս վարքագիծը առավել ևս անմարդկային էր այն պատճառով, որ մինչ այդ, 1919 թ. սկզբներին, նա իր կառավարության հրահանգով հորդորել էր Մեծ եղեռնի ժամանակ Սիրիա տարագրված կիլիկիահայությունը վերադառնալ իրենց հարազատ վայրերը և կենտրոնանալ այնտեղ՝ իբր թե հայության փախչիլայած ռազմանքների ընթացք տալու համար: Ֆրանսիացիները համոզվում էին հայերին, որ իբր իրենք Կիլիկիա են եկել «միայն այդ երկրը կարգի բերելու և այն հայերին հանձնելու նպատակով»: Հետագա իրադարձությունները ցույց տվեցին, որ դա բացահայտ պրոպագանդա էր հայության նկատմամբ:

Ռ. Գ. Սահակյանը հանգամանորեն կանգ է առնում Սվասում ժորժ Պիկոյի և Մուստաֆա Քեմալի միջև կայացած համաձայնության վրա, ըստ որի Ֆրանսիան պարտավորում էր Կիլիկիան վերադարձնել Թուրքիային և միաժամանակ երաշխավորել նրա անբաժանելիությունը: Ծույց է տրվում, որ այս համաձայնագրի հետևանքները ուղղակի ողբերգական էին կիլիկիահայության համար: Միայն Մարաշում, ֆրանսիական զորքերի դուրս գալուց հետո, թուրքական վրիժառուությանը զոհ զնաց ավելի քան 12 հազար հայ՝ Ընդ որում ֆրանսիացիները հեռացան զոհեգող դավաճանաբար, այդ մասին բացարձակապես լսեղեկացնելով հայերին և հետևաբար նրանց թողնելով բախտի ու մոլեռանդ ամբոխի քաղաքների: Ավելին, նույնիսկ այդ զազերի առաջին քաղաքից հետո ևս ֆրանսիական իշխանությունները լիարժեք կրկնակի խաբելու հայերին, թե

ներսը ու մի հիմք շունեն վախենալու, որովհետև թորքական իշխանությունները հոգ են տարել նրանց ճակատագրի մասին: Ֆրանսիայի վարչապետ Ա. Միլերանը նույնիսկ անամոթաբար հայտարարեց, որ «Ֆրանսիան կանի ամեն տնտեսական բան ոչ միայն հայերի ներկան ապահովելու, այլև նրանց ապագա դարգացման և ուժեղ Հայաստանի ստեղծման համար»:

Այսպիսով «քրիստոնյաների պաշտպան», «աստվածական» հորջորջված Ֆրանսիայի կառավարող շրջանների այս ստոր արարքի հետևանքով եղեռնի գնահենով անցած և հրաշքով փրկված կիլիկիահայության գլխին կրկին կախվեց արյունոտ յաթաղան: Գրքում ցույց է տրվում, որ միայն հայության առանձին փշրանքներ փրկվեցին չարդից և ապաստան գտան Մերձավոր Արևելքի տարբեր երկրներում, արաբ ժողովրդի մոտ: Մնացածները կամ ղու՜ գնացին թուրք շեթների ու խուժանի գնդակներին և կամ զենքը ձեռքին հայրենի անառիկ յեռներում պայքարեցին մինչև վերջին շունչը: Թուրք ազգայնականների փողմից Մարաշի հայության նկատմամբ վայրագ կատաղության իրադրությամբ այս անօրինակ բարբարոսությունը որակվեց որպես «հերոսական գործ» և ի պատիվ դրա Մարաշը կենդանի նոր անունով՝ «Հերոս Մարաշ» («Հաճրաման Մարաշ»):

Ֆրանսիական զորքերի անակնկալ դուրս բերումը Մարաշից պատմական գրականության մեջ գնահատվել է որպես «հանելուկային», «խորհրդողովոր», «անհասկանալի» և «անտրամաբանական» մի քայլ: Ռ. Գ. Սահակյանը ցույց է տալիս, որ իրականության մեջ դա Ֆրանսիայի մերձավորարևելյան քաղաքականության տրամաբանական վախճանն էր, արդյունք ֆրանս-քեմալական գաղտնի գործարքի: Ինչպես հայտնի է, Մարաշից հետո ֆրանսիական քաղաքականության հերթական ղու՜ղ դարձան նաև Հաճնը, Այնթապը, Ուրֆան, «այոց բարձր բուլներ»՝ Զեյթունը և այլն:

Մեր կարծիքով գրախոսվող գրքի կարևորագույն արժանիքներից մեկն այն է, որ նրանում հեղինակը հանդամանորեն կանգ է առնում կիլիկիայի հայ բնակչության ինքնապաշտպանական կռիվների վրա, ցույց տալով, որ թեև հայերի ինքնապաշտպանությունը խիստ թույլ էր, սակայն կորովի դիմադրություն են ցույց տվել որտեղ որ դա հնարավոր է եղել:

Գրականության մեջ համեմատաբար մակերեսաորեն է ներկայացված նաև 1920 թ. մայիսին կնքված ֆրանս-քեմալական զինադադարը, որը նոր դժբախտություններ բերեց կիլիկիահայությանը: Հանգամանորեն լուսաբանելով այս հարթը, հեղինակը ցույց է տալիս, որ ֆրանսիական

դիվանագիտության այս հերթական նողկալի քայլի հետևանքով կիլիկիայում կրկին ծայր առան հայերի սպանություններ, բռնություններ, հրկիզումներ: Խաբված և ճակատագրի քմահաճույթին թողնված հազարավոր հայեր կրկին ստիպված էին իրենց ձեռքը վերցնել արագորության ցուպը:

Սովետական թուրքագիտական գրականության մեջ 1921 թ. հոկտեմբերի 20-ի Անկարայի պայմանագիրը ստացել է հակասական մեկնաբանություն: Եղել են նույնիսկ հեղինակներ, որոնք այդ պայմանագիրը գնահատել են որպես Անտանտի իմպերիալիզմի դեմ թուրք ժողովրդի տարած խոշոր հաղթանակ: Ռ. Գ. Սահակյանը ցույց է տալիս, որ իրականում դա ֆրանս-քեմալական մի գործարք էր, որը հանդիսանում էր կողմերի միջև դիվանագիտական շփումների տրամաբանական վերջակետը: Այդ պայմանագրով Ֆրանսիան ճանաչում էր Անկարայի կառավարությունը, հրաժարվում էր այսուհետև պայքար մղել նրա դեմ, պարտավորվում էր իր զորքերը դուրս բերել Թուրքիայի տարածքից, այդ թվում նաև կիլիկիայից, համաձայնություն էր տալիս նրան վաճառել զենք, ռազմամթերք և այլն: Անկարայի պայմանագրով թուրք ազգայնականները ստանում էին կիլիկիայի նկատմամբ իրենց ծրագրած նպատակները արագորեն իրականացնելու հիմնալի հնարավորություններ: Երկրամասի քրիստոնյա բնակչությանը և առաջին հերթին հայերին ոչնչացնելու նպատակով կազմակերպվեցին բազմաթիվ զինված հրոսակներ: Աղանայում, օրինակ, սկսեց գործել «Ազգային վրեժ» կոչված մի կազմակերպություն, որը գազանային մոլուցքով սկսեց հաշվեհարդար տեսնել անզեն հայ բնակչության հետ: Անկարայի պայմանագիրը միաժամանակ իսպառ մոռացության էր մատնում Սևրի պայմանագիրը, որովհետև ըստ էության Ֆրանսիան ընդունում էր նրա գործադրման փաստական և իրավական անհնարինությունը: Առհասարակ թուրք ազգայնականները օգտագործեցին ինչպես Անկարայի, այնպես էլ Ալեքսանդրապոլի և Կարսի պայմանագրերը, որպեսզի ընդհանրապես բացառեն Հայկական հարցի քննարկումը Անտանտի պետությունների հետ: Գրքում այս կարևոր թեղը հիմնավորվում է բազմաթիվ անվիճելի ու համոզիչ փաստերով:

Ռ. Գ. Սահակյանը ցույց է տալիս, որ թեև կիլիկիայում «հայկական օջախ» մասին հարցը, Թրակիայի և Իզմիրի հարցերի հետ միասին, շարունակում էր արծարծվել Թուրքիայի հետ Անգլիայի և Ֆրանսիայի հետագա դիվանագիտական շփումների ժամանակ, սակայն կիլիկիայի բնակչության, մասնավորապես հայերի ճակատագիրը ավելի ու ավելի քիչ էր լսնանգըստացնում նրանց Թուրքիայի հետ ապագա

Հաշտության հարցի քննարկման ժամանակ Բնորոշ է, որ Պուանկարեն հայտարարել է. «Հայկական հարցի լուծումը չպետք է փնտրել Կիլիկիայում, որտեղ, եթե կարելի է այդպես արտահայտվել, արդեն հայեր չկան»:

Անկարայի պայմանագիրը Կիլիկիայի քրիստոնյա բնակչության, մասնավորապես հայերի կողմից ընդունվեց մեծագույն տաքնապով: Թուրքական վարչակարգի վերադարձը Կիլիկիա նրանց համար հանդիսանում էր իսկական մղձավանջ: Անցյալի փորձով հայությունը այլևս ոչ մի հավատ չէր կարող ընծայել թուրքական եերաշխիքներին: Նկատմամբ Կիլիկիահայության համար գաղթից կամ կոտորածից բացի այլ ընտրություն չկար: Ամենազազրելին ու անմարդկայինը այն էր, որ ֆրանսիացիները ոչ միայն ճակատագրի քաջաճշտության հանձնեցին Կիլիկիահայությանը, այլև ամեն կերպ աշխատում էին խանգարել նրանց զանգվածային արտագաղթը՝ թուրքական դժոխքից փրկվելու համար: Միակ միջոցարկանն այն էր, որ այս անգամ, Լեոյի արտահայտությամբ, «հայերը գեթ մեկ անգամ իմաստություն ունեցան չհավատալու միջազգային սրիկաներին»: Կիլիկիահայության մեծ մասը, լքելով հարազատ վայրերը, գաղթեց Կիպրոս, Մալթա, Պաղեստին, Սիրիա և այլ երկրներ, որի հետևանքով Կիլիկիան ուղղակի հայաթափ եղավ:

Հեղինակը հատուկ քննության առարկա է դարձնում Կիլիկիայի հայության վիճակի հարցը Ազգերի լիգայում և միջազգային տարբեր կոնֆերանսներում: Այսպես, թեև Լոզանի կոնֆերանսում (1922—1923 թթ.) բրիտանական դիվանագիտությունը տխրահռչակ լորդ Քերզոնի բերանով երկշոտ տոնով խնդրում էր թուրքական պատգամավորությանը Թուրքիայի ասիական տարածքի որևէ մասում հայերի համար գտնել համախըմբման կենտրոն, սակայն դա արվում էր լուր հայնուն պատմության: Իրականում բրիտանական դիվանագիտությունը, հավատարիմ իր սովորական գործելակերպին, փորձում էր ազգային փոքրամասնությունների իրավունքների հարցը ծառայեցնել որպես լծակ քննական թուրքիայի վրա ճնշում գործադրելու և նրանից զիջումներ կորզելու նպատակով:

Գրքում քննական վերլուծության է ենթարկվում նաև Կիլիկիայում հայկական քաղաքական կուսակցությունների և ազգային կազմակերպությունների գործունեությունը: Ցույց է տրվում, որ նրանք դրսևորում էին քաղաքական կարճատեսություն, դեպքերն ու իրադարձությունները զնահատելու: անընդունակություն, հաճախ նաև դրանք Կուսակցությունների հակում: Իսկ Կիլիկիահայության ղեկավարները, խաբսափելով միամիտ մոլորության մեջ, լրջորեն հավատում էին, որ Ֆրան-

սիան գրավել է Կիլիկիան, որպեսզի հետագայում այն հանձնի հայերին՝ այնտեղ անկախ հայկական նահանգ կամ նույնիսկ հանրապետություն ստեղծելու համար: Այսպիսով նրանք չէին հասնում ֆրանսիական իշխանությունների կողմից իրականացվող գաղութատիրական քաղաքականության էությունը: Մյուս կողմից, հայ ազգային ղեկավարները թերագնահատում էին քննական շարժման թափը: Նրանք առհասարակ անտեսում էին այն իրողությունը, որ թուրքերը դարեր շարունակ ունեցել են ուժեղ պետականություն. ճկուն դիվանագիտություն, հզոր բանակ, ունեցել են ճնշված ժողովուրդների սպառնալիքական շարժումները ճնշելու դարավոր փորձ և այլն:

Ռ. Գ. Սահակյանի մենագրության բերած կարևորագույն նորություններից մեկն էլ այն է, որ նրանում քրիստոնյա ժողովուրդների վիճակի վերլուծության հիմքի վրա բացահայտվում են քրիստոնյա շարժման երկու հակասական կողմերը՝ հակաիմպերիալիստական և շովինիստական, որոնք առաջին անգամ իրենց դրսևորում են նրան ունեցան ոչ այլուր, քան Կիլիկիայում: Ի տարբերություն սովետական մի շարք թուրքագետների, որոնք քննականների շարժումը զնահատում են միակողմանի կերպով որպես Անտանտի իմպերիալիզմի դեմ ուղղված թուրք ժողովրդի ազգային-ազատագրական շարժում, Ռ. Գ. Սահակյանը Կիլիկիայի օրինակով ցույց է տալիս, որ եթե քննականների գլխավորությամբ այդ երկրամասում մղվող պայքարը ֆրանսիական զորքերի դեմ կարելի է դնահատել որպես արդարացի պայքար, ապա քրիստոնյա բնակչության դեմ պայքարը անարդարացի էր և ունեցր շովինիստական բնույթ: Հեղինակը եզրակացնում է, որ պատմական հանրահայտ իրողության կեղծիք է Կիլիկիայի հայ խաղաղ բնակչության դեմ քննական կանոնավոր զորքերի և զինված հրոսակների խժոժությունները ներկայացնել որպես ազգային-ազատագրական, հայա-իմպերիալիստական շարժում:

Ռ. Գ. Սահակյանի մենագրության կարևորագույն արժանիքներից է նաև այն, որ նա շրջանառության մեջ դրել հսկայական քանակությամբ տարաբնույթ աղբյուրներ ու գրականություն, որոնցից շատերը առ այսօր անհայտ էին հետազոտողներին: Աշխատության համար հատկապես շահեկան են եղել վերջերս Ֆրանսիայից ստացված հայկական ազգային պատգամավորության արխիվային ֆոնդերը, որոնք պարունակում են նշված պատգամավորության ողջ գրադրությունը ֆրանսիական կառավարության պաշտոնական ներկայացուցիչների հետ Օգոստոսյան ժամի են նաև Փարիզի ազգային գրադարանում և Ենո-

բարյան մատենադարանում պահվող հարուստ նւթերը և այլն:

Անշուշտ, գրախոսվող աշխատությունը զերծ չէ որոշ թերություններից, որոնք, սակայն, կրում են մասնակի, ոչ սկզբունքային բնույթ: Մասնավորապես կան հարցեր, որոնք կարելի էր լուսաբանել ավելի հանգամանորեն, օրինակ՝ Այնթապի և Ուրֆայի հերոսական ինքնապաշտպանությունը, Ֆրեստեզգի կռիվները և այլն: Այնուհետև, մեր կարծիքով մի շարք դիվանագիտական փաստաթղթերի մեջբերումները կարելի էր

տալ առավել կրճատ ձևով կամ հեղինակի շարադրանքով:

Ռ. Գ. Սահակյանի աշխատությունը գրված է դիտական հմտությամբ, տեսական պատշաճ մակարդակով և նյութի խոր իմացությամբ: Ստացվել է ինքնատիպ, գիտական լուրջ արժանիքներով օժտված մի աշխատություն, որը կարևոր ներգրում է ինչպես հայ ժողովրդի պատմության ուսումնասիրման, այնպես էլ սովետական թուրքագիտության բնագավառում:

Պատմ. գիտ. դոկտոր Վ. Ա. ԲԱՅՐԱՆՆԻՍԿԱՆ

Le livre Arménien a travers les ages. Marseille, 1985

Վերջերս Ֆրանսիայում (Մարսել) լույս տեսավ մի աշխատություն, որ առանձին գլուխներ տրամադրված են հայ «ձեռագիր գրքին», ապա որոշ գլուխներ՝ «տպագիր գրքին»: Այս աշխատությունը ստեղծմանը մասնակցել են բազմաթիվ հեղինակներ:

Առաջին գլխում Մ. Սալվինին նկարագրում է հայ գրերի գյուտից առաջ գոյություն ունեցող գրերը պատմական Հայաստանում: Նախ հիշում է Վանի թագավորության սեպագիրը, տալով մի քանի նմուշներ և հատկապես Արգիշթի արքայի՝ էրնուրուի (երևան) քաղաքի հիմնադրման սեպագիր արձանագրությունը լուսանկարով, որպեսզի տեսնենք (տառագրությամբ) և ֆրանսերեն թարգմանությամբ: Երկրորդ գիրը, որ Հայաստանում օգտագործվել է, արամեականն է: Այդ լեզվով գրված մի քանի արձանագրություններ հայտնաբերվել են Արտաշես արքայի (189—160 մ. թ. ա.) թագավորության շրջանից: Երրորդ գիրը հունականն է, որն օգտագործվել է արտեմիդանի գլուխահեռու Հեղինակը հիշում է Լիզիստիդիդների ժամանակաշրջանից Արմավիրում հայտնաբերված արձանագրությունները: Այսպես նկարագրում է հայոց Տրդատ Արշակունի թագավորի (66—88) թողած Գառնիի հունարեն հայտնի արձանագրությունը: Հայաստանում գրություններ են նաև լատիներեն արձանագրություններ, որոնք հռոմեացիների կողմից են գրվել:

Աշխատության երկրորդ գլուխը նվիրված է հայոց այլուրեքի գյուտին (հեղինակ Ֆ. Ֆելդի): Նա նշում է, որ IV դարում Հայաստանում օգտագործվում էին հունարենն ու հատկապես ասորերենը, որն առավել հանդուրժելի էր 387-ի բաժանումից հետո Մեծ Հայքի մեծագույն մասնիկ աղղեցության տակ վերցրած Սասանյան Պարսկաստանի համար: Հայոց Վառաշապուհ արքայի և Սահակ կաթողիկոսի աջակցությամբ Մեսոպոտամիայի ձեռնարկից հայոց գրերի ստեղծ-

ման գործին: Ըստ Ֆ. Ֆելդի, Մաշտոցը որպես հիմք վերցրեց հունական գիրը, ավելացնելով հայերենին հատուկ հնչյունների համար համապատասխան գրեր: Նկարագրում է գրի տեսակները՝ երկաթագիր, բուրգգիր ու եռորգգիր. ապա լուսանկարներով ու թաքստություններով ներկայացված են Երեսուզեմում հայտնաբերված VI դարի և Մրենի VII դարի արձանագրությունները, ինչպես նաև էջմիածնի Ավետարանից և այլ գրագրերից գրչության հնագույն նմուշներ և այլն:

Այս գլխում (առանձին բաժնով) Ժ.—Պ. Մահեն հետաքրքրական մի նորություն է հայտնում. «Հայոց լեզվի մասին հնագույն օտար լիկայությունը՝ Օթլենի բառացանկը» (Le Glossaire d'Autun) խորագրով: Ըստ նրա, Բագրատունյաց թագավորության շրջանում հայերը հարաբերություններ են ունեցել ոչ միայն Բյուզանդիայի, այլև միջնադարյան Եվրոպայի հետ: IX—X դդ. մի լատին անանուն գրիչ, առիթ ունենալով դրուցելու ոմն հայի հետ (որն արևմուտքում է գտնվել), նրանից գրի է առել մի բառացանկ՝ բաղկացած 90 հայերեն բառերից: Այդ բառացանկը գրված է IX—X դդ. մի լատիններեն ձեռագրի մեջ, որը գտնվում է Օթլենի (Ֆրանսիայի միջին մասում, Սաոն և Լուար շրջանում) քաղաքապետարանի գրադարանում:

Հեղինակը հարց է տալիս՝ արդյոք սա խոսակցական լեզվի ձեռնարկ է, թե՞ գիտականի սոսկ հետաքրքրություն: Համենայն դեպ, դա կարևոր փաստաթուղթ է, քանզի այդ դարերից հայերեն ամբողջական ձեռագրեր մեզ քիչ են հասել: Բառացանկում հայերեն բառերը գրված են լատինատառ և դժմացը՝ լատիններեն խմատը: Ունենալ այն փաստից, որ բառացանկում հայերենի կ տառի դիմաց հաճախ գ է գրված, Ժ.—Պ. Մահեն եզրակացնում է, որ այդ անհայտ հայ անձնավորությունը եղել է Արևմտյան Հայաստանից, քանզի հենց այդ դարերում Հայաստանի